

Այս չորրորդ անգամն է որ առիթը կունենամ այս պատկառելի ժողովին տալու իմ տարեկան զործունեության տեղեկագիրը: Անցեալ շաբաթ երբ նստած կը պատրաստէի այս համարատուութիւնը եւ աչքէ կանցնէի արձանագրութիւնները կատարած ծիսակատարութիւններուս, այցելութիւններուս եւ ժողովներուս, վերջիշումը ունեցայ անցնող տարուան մը մեր համայնքի կեանքին իր ուրախութիւններովն ու ցաւերովը, եւ սակայն երբ կարող եկաւ զանոնք արձանագրելու, տեսայ թէ իբրեւ արդիւնք թողութիւն վրայ ունեցայ քանի մը թիւեր միայն, որոնք եթէ զաղափար մը կուտան մեր զործունեության մասին, այնքան հեռու են իրականութենէն որքան Տիճրոյթի քարտէսը իրական Տիճրոյթ քաղաքէն: Քարտէսը մեզի ճշգրիտ զաղափար մը կուտայ քաղաքին դիրքին ու փողոցներուն իրարու հանդէպ ունեցած յարաբերութեան մասին, սակայն հոն չես զգար քաղաքին կեանքն ու անոր բազմակերպ ու կը փախտէ բազմադիմի ձգտումներով ու գործունեութեամբ: Եւ սակայն միշտ ալ քարտէսը պէտք է մեզի ճշտելու մեր դիրքը եւ ուղին, եւ այս տարեկան ժողովը իր տեղեկագիրներով շատ կարեւոր տեղ մը կը գրաւէ եկեղեցւոյս կեանքին մէջ: Կարեւոր է որ պահ մը կենանք ու ետ նայինք եւ ապա ըստ այնմ ծրագրենք յառաջիկայ տարուան մեր ուղեգիրը:

Նախորդ տարիներուն կը շանայի այս տեղեկագրիս մէջ տեղ տալ բոլոր մեր կազմակերպութեանց, քանի որ ի պաշտօնէ իբրեւ նախագահ իմ բաժինս բերած եմ անոնց վարչական եւ այլ գործունեութեանց: Սակայն նկատելով որ անոնք բոլորը իրենց տեղեկագիրը առանձնաբար կը ներկայացնեն արդէն պիտի բաւականանամ բուն իսկ կրօնական ու ծիսական գետնի վրայ բերած գործունեութեամբս:

Ա. Անխափան ամէն Կիրակի ունեցած ենք Ս. Պատարագ եւ քարոզ: Մեծ Պահքի օրերուն Ձորեքշաբթի դիշերները Խաղաղական եւ Հանգստեան ժամերգութիւն, իսկ նոյն շրջանի Կիրակի օրերուն Արեւազալի ժամերգութիւն եւ Ս. Պատարագ փակեալ խորանով: 1955 տարուան ընթացքին մատուցած ենք 56 Ս. Պատարագ, միասին հաշուած ըլլալով 2 խմբան, 1 Կարգանանց, 1 Հայկական Մոնիթորի, 1 Աւագ Հինգշաբթիի եւ եւ 1 Դեկտ. 16ի Ս. Պատարագները: Դեկտ. 16ին Ս. Պատարագ մատուցինք Ուրբաթ օրը, ի ներկայութեան խումբ մը օտար եկեղեցականներու, որոնք եկած էին աւելի մօտէն ճանչնալու մեր սրբազան արարողութիւնները:

Հետեւեալ հոգեւոր հայրերը իրենց այցելութեանց առթիւ մատուցած են Ս. Պատարագ եւ պայծառացուցած մեր Ս. Եկեղեցին. նորընտիր Առաջնորդը, Գերշ. Տ. Մամբրէ Արք. Գալմաեան իր առաջին Առաջնորդական Ս. Պատարագը մատուցեց եկեղեցւոյս մէջ Ս. Մոնիթորի առթիւ: Հոգ. Տ. Կիրեղ Վրդ. Գաբրիէան, Ս. Երուսաղէմի Նուիրակը մեր հետ եղաւ ամբողջ Աւագ Ծաթնուան ընթացքին եւ պատարագեց Ս. Ջատկի օրը: Հայր Սուրբը պատարագեց նաեւ Սեպտեմբեր 4ին, երբ ես կը բացակայէի քաղաքէն ներկայ գտնուելու համար ՀԵՅԿԱի տարեկան պատգամաւորական ժողովին որ գումարուեցաւ ի Ռէյսին, Ուիսքանսըն: Մայիս 22ին պատարագեց Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան, Հոգ. Հովիւր Նիւ Պրիթըն եւ Հարթնըրտ, Քըն. քաղաքներուն, որ հիւրաբար քաղաքս կը գտնուէր: Ջատկի առթիւ ես մեկնեցայ Միքալօ մատուցանելու համար խմբան եւ Ս. Ջատկի պատարագները, քանի որ անոնք առանց հովիւի մնացած էին: Իսկ Հոկտ. 23ին Ձէնըլ 2 Թէլէվիզիոնի վրայ ունեցանք կէս ժամուան արարողութիւն մը որ կը բաղկանար ձաշու ժամերգութենէն եւ քարոզէ մը:

Այս առթիւ իմ խոր գնահատութիւնս կը յայտնեմ Արշ. Ա. Սրկ. Լեւոն Ձէնեանի, որ իբրեւ քարոզիչ իր օժանդակութիւնը բերաւ մեզի երկու շաբաթը անգամ մը քարոզելով եւ իր խօսքին ուժն ու հմայքը տալով մեր սրբազան բեմին: Ջանացինք այս տարի եւս ամսուան երկրորդ Կիրակին յատկացնել մեր նոր սերունդին, քարոզները խօսելով անգլերէն լեզուով: Այս տարի եւս ԲՐԻՄՐԱՍ ԻՎ կէս-դիշերային արարողութիւն մը կատարեցինք մասնաւորաբար մեր ամերիկացիներու գաւազաններուն համար:

Գիտակցելով անգլերէն լեզուի կարեւորութեան եւ այդ լեզուին մէջ իմ արտայայտուելու դժուարութեան, անցեալ Սեպտեմբերէն սկսեալ մասնաւոր դասեր կառնեմ Երևանի լեզուաբանական ճիւղի Գիտությունների ակադեմիայի ճիւղի մէջ եւ շնորհ է որ ոչ միայն կարենամ մեր երիտասարդներուն պէտքերուն հասնիլ այլ նաեւ ծանօթութեան եւ յարաբերութեան շրջանակներ ստեղծել մեր համայնքէն դուրս եկեղեցիներու եւ հաստատութեանց հետ: Կը հաւատամ որ կարեւոր գործ մըն է այս եւ ճանչնալու եւ ճանչցուելու պլանագոյն կերպը անձնական յարաբերութիւնն է:

Դպրաց Դասը պիտի տայ իր տեղեկագիրը, եւ սակայն Ս. Պատարազի ընթացքին իբրեւ իմ ամէնէն մօտիկ գործակիցներս կուզեմ իմ գնահատանքի խօսքերս արտայայտել Եկեղեցւոյս սարկաւազներուն: Բրշ. Ա. Սրկ. Յարութիւն էքիզեան թէ իբրեւ դպրապետ եւ թէ իբրեւ սարկաւազ իր ծառայութեամբ բերած է շուք ու վեհութիւն մեր արարողութեանց ու ծիսակատարութեանց, ու ամէն անգամ որ խորհրդակցութեան համար դիմած եմ իրեն օգտուած եմ իր ճաշակէն ու փորձառութենէն: Անցնող տարուան ընթացքին մեր բարեշնորհ սարկաւազներէն Արա Հայկ, Դանիէլ Շահան, Խաչիկ Սէմիզեան եւ Յակոբ Ճանոյեան կանոնաւորաբար իր սպասարկութիւնը բերած են Ս. Սեղանին: Պր. Յակոբ Ճանոյեան Հայ Դպրոցի ուսուցչութեան պատճառաւ ձմեռը կարող չըլլար կանուխէն մասնակցիլ Ս. Պատարազին: Մեծ է ուրախութիւնս մանաւանդ անոր համար որ մեր եկեղեցւոյ սարկաւազները ոչ միայն հաւատարմօրէն ու լաւ կը կատարեն իրենց պաշտօնը, այլ նաեւ իբրեւ սպասարկուները Ս. Սեղանին իրարու մօտ կը զգան ու կը գործակցին իրարու:

Բ. 1955 տարուան Յունվար 1էն սկսեալ մինչեւ Դեկտեմբեր 31 ունեցած ենք հետեւեալ ծիսակատարութիւնները. 145 մկրտութիւն, որոնցմէ 9 հատը տարիքով 20ը անցած էին. ասոնցմէ միայն քանի մը հատը օտար են եւ ամուսնութեան առթիւ որոշած են մեր եկեղեցիին միանալ, իսկ մնացեալները հայեր են որ դժբախտաբար զանազան պատճառներով զրկուած են այս ս. խորհուրդէն: Պսակադրութիւններուն թիւը եղած է 44, որոնցմէ հինգ հատը նախապէս քաղաքային ամուսնութիւն կնքած էին եւ սակայն չէին ստացած Եկեղեցւոյ օրհնութիւնը: Այս մասին մասնաւոր հոգ պէտք է տանինք որովհետեւ շատերուն մտքին մէջ տարածուած է այն թաղափարը թէ երկուքն ալ նոյն բաներն են: Ինչ որ մեծ սխալ մը եւ մեղք մըն է: Թաղումներու թիւը եղած է 62: Այս տարի նշանտուքներու ալ հաշիւը պահելով հաշուեցի 21 նշանտուք: Բաղդատելով 1954ին հետ, 1955ին ունեցած ենք 41 մկրտութիւն աւելի, 9 պսակ աւելի եւ 9 թաղում աւելի:

Ամէն մկրտութենէ առաջ 5-8 վայրկեան տեւող լուսաբանութիւն մը տուած եմ կատարուելիք խորհուրդին մասին, նմանապէս շարունակած եմ խորհրդակցական տեսակցութիւն մը ունենալ ամուսնանալիք զոյգին հետ, թուականէն շուրջ 10 օր առաջ, պահանջելով որ իրենց մկրտութեան վկայականները միասին բերեն, եւ յաճախ այս առիթներով է որ երեւան կելլէ որ անոնք տակաւին կնքուած չեն: Աւելի քան ժամ մը տեւող այս խորհրդակցութեանց ընթացքին շնորհիւ եմ զիրենք լուսաբանել Պսակի Ս. խորհուրդին մասին եւ շեշտած կարեւորութիւնը Եկեղեցիին իրենց ընտանեկան երջանկութեան տեսակէտէն: Շարունակած եմ նաեւ թաղումներու առթիւ իմ այցելութիւններս հանգուցեալներու անմիջական պարագաներուն:

Գ. Հիւսիս-հարավ Եր ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԻՈՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ.- Անցեալ տարուան ընթացքին այցելած եմ 214 հիւանդներու, իսկ մասնաւոր հովուական այցելութիւններուս թիւը եղած է 136: Այս տարի եւս Ծնունդի եւ Ջատկի առիթներով այցելած ենք Ելոյիզի եւ Միշիկընի Տարեցներու Տան մեր հիւանդներուն ու ծերերուն, մասնաւոր պաշտամունք եւ Ս. Հաղորդութիւն մատակարարելով անոնց: Ելօիզի մէջ ունինք շուրջ 30 հայեր: Յիշեալ այցերը կը կազմակերպուին Երէց Տիկնանց Եկեղեցասէր Միութեան կողմէ:

Դ. Տնօրէնէ՞ք.- 1955 տարուան ընթացքին Ս. Ծնունդի առթիւ օրհնած եմ 124 տուներ, իսկ Ջատկի առթիւ ալ դարձեալ 124 տուներ, ընդհանուր թիւը բերելով 248ի: Մասնաւոր շնորհակալութիւն կուզեմ յայտնել Պր. Պաքսամ Պարսամբանի ինչպէս նաեւ Պր. Յարութիւն Պուտաքեանի որոնք զանազան առիթներով օգնած

են զիս առաջնորդելով ծխականներու տուները եւ օգնելով երգեցողութեան մէջ :

Դ. ԽՈՐՀՐԴԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՔԱՌԻՍԼԻՆԿ. - Տարուէ տարի կաւելնայ թիւը անոնց որոնք իրենց անձնական կամ ընտանեկան դժուարութիւնները կը բերեն իրենց քահանային իբրեւ իրենց խորհրդապահ հոգեւոր հայրը: Ուրախ եմ որ Աստուծոյ շնորհիւ քանի մը ընտանիքներու կըրցած եմ որոշ չափով օգտակար ըլլալ, բայց մասնաւանդ մխիթարել անձկութեան եւ յուսալքութեան մէջ եղող անձեր:

Ե. ՋԱՀԱԿԻՐ. - Ամէն ամիս անխափան հրատարակած ենք Եկեղեցւոյս թերթիկը: Այս առթիւ դարձեալ կուզեմ շնորհակալութիւն յայտնել Պր.Ճորճ Բիւրէնեանին որ չորս տարիներէ ի վեր ազնուօրէն յանձն առած է թերթիս տպագրութեան ՓԼԵՅԹՆԵՐԸ ձրի շինել: Թերթին անգլերէն բաժնի խթմագրութիւնը եւ մեքենագրութիւնը, ինչպէս նաեւ հասցէներու փոփոխութեան կարեւոր գործը Երէցկին Մանուշակ Գասպարեանն է որ կը կատարէ սիրայօժար կերպով:

Զ. ՔԱՐՏՈՒՂԱՐ. - Ուրախ եմ որ Ծխական Խորհուրդը տեսնելով պէտքը եւ ընդառաջելով այս Պատ.Ժողովին փափաքին, վերջերս պաշտօնի կանչեց Պր.Յակոբ ձանոյեանը իբրեւ քարտուղար, որ շաբաթը 20 ժամ կը տրամադրէ այս գործին: Ծխական Խորհուրդին հետ արդէն կը զգանք քարտուղարին օգտակարութիւնը:

Է. Անցնող տարուան ընթացքին մասնակցած եմ հետեւեալ համագումարներուն. Հոգեւորականաց Ամառնային Համագումարը ի Պէլմար, Նիւ ձըրզի, Յուլիս 31- Օգոս. 5, որու ընթացքին ինձի եւս բաժին հանուած էր խօսիլ "Հայ Եկեղեցւոյ Բարոյացութեան մասին": Սեպտ. 4ին մասնակցեցայ ՀԵԿԱԻ Համագումարին ի Ռէյսին: Իսկտ. 8էն 11 մասնակցեցայ Պատգամաւորական Ժողովին եւ զայն կանխող Հոգեւորականաց Ժողովին ուր "Պրըթ Բընթրօլ"ի եւ Հայ Եկեղեցւոյ դիրքը այդ մասին" նիւթին շուրջ: Մարտ 5-6 մասնակցեցայ նաեւ Իսթ Լէնսինկի մէջ գումարուող "Կրօնական Դաստիարակութեան Համագումար"ին ուր ներկայացուցի "Հաւատամք"ին ծագումն ու գործածութիւնը:

Ը. ԱՆՊԱՍԱԳՐՈՒԹԻՒՆ. - Ծխական Խորհուրդը վերջերս ձեռնարկեց 500 նոր անդամներ գրելու արշաւի մը, երկու նպատակներ հետապնդելով. առաջին գաղութիս ժողովուրդը կապել Եկեղեցւոյս գործօն անդամակցութեամբ, եւ երկրորդ Եկեղեցւոյս եկամուտը բարձրացուցած ըլլալ: Իժրախտաբար անդամներուն տարետուրքերը նուազագոյնին վրայ կեցած են: Ըստ օրինի նուազագոյն տարետուրքը պէտք է ըլլայ հինգ տոլար: Հետեւեալն է պատկերը մեր անդամատուրքերուն: Ներկայիս ունինք 952 անդամներ եւ անդամատուրքերէ ընդհ. եկամուտն է 5750.50 տոլար հետեւեալ կերպով.

3 անդամներ	100ական տոլար	15 անդամներ	7.50ական տոլար
2	50	8	7
2	30	784	5
1	20	4	4
2	17.50	38	3.50
2	15	1	3
26	12.50		
64	10		

Ծխական Խորհուրդը քանիցս խորհեցաւ Խոստումի կամ Փլէն Սիսթէմի առաւելութիւններուն մասին, եւ սակայն նկատի ունենալով գործին մեծութիւնը եւ այլ պատճառներ տարուէ տարի յետաձգած է գործնական քայլ մը առնել այս մասին: Իբրեւ նախանձախնդիր զաւակները Ս.Եկեղեցւոյս եթէ կուզէք որ մեր Եկեղեցին կարենայ հասնիլ մեր ժողովուրդին կրօնական, մշակութային եւ դաստիարակչական պէտքերուն, եւ անի ու զօրանայ, ձեզի կիցնայ այս մասին որոշում մը տալ եւ որդեգրել այս Փլէն Սիսթէմը:

Բ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒ ԴԱՍՏԻՍՈՒՄԿԱԶԱԿԱՆ ԳՈՐԾ. - Մեր համայնքին ազգային, եկեղեցական ու մշակութային դաստիարակչական գործը կը ծանրանայ մասնաւորաբար մեր եկեղեցիին վրայ: Շատ բաներ ունինք սորվելիք ու սորվեցնելիք: Դժբախտաբար սակայն, բացի Կիրակնօրեայ եւ Հայ Լեզուի Դպրոցէն, մնացեալը չունի կազմակերպեալ ծրագիր: Եկեղեցական իւրաքանչիւր կազմակերպութիւն կամ միութիւն ունի իր առանձինն դաստիարակչական յանձնախումբերը - ԷճՈՒՔԷՉԸՆՐԸ քմիթի - որոնք կը շանան ամիսը անգամ մը խօսող մը կամ Ծիլմ մը ներկայացնել: Պէտք է կազմել այս բոլորը իրարու կապող, քօօրտինէ յիթ ընող մարմին մը: Ունէինք Մշակութային Մարմին մը որ առաւելապէս դպրոցներով կը զբաղէր, եւ երբ դպրոցները ձեռնհաս անձերու հոգատարութեան յանձնուեցան, Մշակութային Մարմինը ինքզինք լուծեալ յայտարարեց: Եկեղեցին պէտք ունի գործօն Մշակութային Մարմինի մը: Կամ պէտք է ստեղծել եւ կամ արդէն գոյութիւն ունեցող նման մարմին մը Եկեղեցւոյ հովանաւորութեան տակ առնել: Ամէն շանք պէտք է թափենք ջանտեսելու համար մեր չափահասներու իմացական սնունդն ու դաստիարակութիւնը:

Վերջացնելէ առաջ այս տարեկան զեկոյցը կամ տեղեկագիրը, հաճոյքով կը դնահատեմ եւ կօհնեմ մեր Եկեղեցւոյ բոլոր կազմակերպութիւնները եւ բոլոր այն անդամները, որոնք իրենց բաժինը բերին եկեղեցւոյ տարեկան այս հունձքին մէջ, ինչպէս նաեւ բոլոր անոնք որոնց բարեկամութիւնը վայելեցի, որոնք օգնեցին ինծի երբեմն իրենց բարի թելադրութիւններով եւ երբեմն իրենց յօժարակամ գործակցութեամբ, ամէն անգամ որ պէտք ունեցայ իրենց: Կը մաղթեմ Աստուծոյ օրհնութիւնը եւ վարձատրութիւնը բոլորին, իրենց նուիրեալ ծառայութեան համար:

Խոստացած էի ձեզի չխօսիլ Եկեղեցւոյս օժանդակ կազմակերպութեանց մասին, սակայն չեմ կրնար չարտայայտուիլ Միական Խորհուրդին մասին որ իր գործը կատարեց ըրշութեամբ եւ նուիրումով Պր. Հայկազ Նաղուպեանի կարող ատենապետութեամբ: Կրնաք զաղափար մը կազմել Եկեղեցւոյս բազմազան գործերուն, վարչական ու յանձնախումբային գործերուն մասին եթէ ըսեմ թէ 1955 տարուան ընթացքին մասնակցած եմ 192 ժողովներու եւ հանդիպումներու, եւ տակաւին պէտք է գիտնաք թէ մեր Եկեղեցւոյ հետ կապուեցող ժողովներուն ու հանդիպումներուն ընդհանուր թիւը շատ աւելի է, թերեւս աւելի քան 300: Կար

Այս տարի Տիթրոյթի մեր Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ շէնքին շինութեան եւ օծման 25ամեակն է, եւ Միական Խորհուրդը կը պատրաստուի արժանավայել կերպով մը տօնախմբել: Երանի թէ տարին անգամ մը տօնենք Եկեղեցւոյս օծման տարեդարձը մասնաւոր ձեռնարկով մը:

Խոնարհաբար կը խնդրեմ նաեւ ձեր աղօթքը, որպէսզի Աստուած ինծի եւս, իր նուաստ սպասաւորին ու պաշտօնեային, տայ իր շնորհը իմաստութեամբ, նուիրումով եւ քաջութեամբ հովուելու իր այս բանաւոր հօտը ի ծառայութիւն Հայ Ազգին ու ժողովուրդին եւ ի փառս Քրիստոսի եւ Հայց. Եկեղեցւոյ:

Փետրվար 26, 1956

ԱՌՆԱԿ ԵՐԵՑ
Հոգեւոր Հովիւ